

Մ Ա Ր Ղ Կ Ը Փ Ն Տ Ո Շ Մ

Սիրտըս՝ ծաղիկ, հոգիս՝ քընար,  
Ութըս դրրի կեանքի սեմին.

— Բարեւ, ա՛յ մարդ,  
Նոյն պատկերին  
Ըստեղծուեր ենք մենք համաձայն,  
Սիրենք զիրար...

— Օտարական,  
Քեզ չեմ ճանչնար,  
Ինծմէ հեռու,  
Բառերուդ վրայ  
Շէշտ կայ ուժգին:

— Բարեւ, հայ մարդ,  
Բախտակից ենք, մենք պանդուխտ ենք,  
Նոյն ցաւերն ու հոգերն ունինք,  
Օ՛ն, միասին դիմագրաւենք...

— Մենք միասին  
Կ'արժենք ոչինչ.  
Ես առանձին  
Կը շինեմ դիւք:

Մա՛րդ կը փընտռեմ,  
Ամէնուրեք, ամէնուրեք,  
Հըրապարակ, տօնավաճառ, ակադեմի:

— Ես բըժիշկ եմ:

— Օ՛, դուն վէրքեր կը դարմանես,  
Կը սիրեմ քեզ,  
Արեւին տակ, անձրեւին տակ  
Շատ եմ քալեր,  
Փոթորիկի և հըրդեհի  
Մէջէն անցեր,  
Ունիմ խիտ ջերմ,  
Խոնջ ոսկորներ,  
Ու կը ցաւի սիրտըս սաստիկ:

— Այցեգինս է, պատասխանեց,  
Յիսուն ոսկի:

Մա՛րդ կը փընտռեմ,  
Ամէնուրեք, ամէնուրեք,  
Ակո՛ւմբ, թատրո՛ն, մատենատո՛ւն.

— Բանաստեղծ եմ:

— Օ՛, երգերով դուն կ'ամոքես  
Խորունկ վիշտեր,  
Կը սիրեմ քեզ.  
Որք ու անտէր  
Երկրէ երկիր եմ թափառեր,  
Կ'ապրիմ պանդուխտ,  
Ունիմ կարօտ հայրենիքի,  
Կարօտ սիրոյ,  
Մոռացօնքի...

— Կի՛նն ու գի՛նին կ'երգեմ, յարեց:

Մա՛րդ կը փընտռեմ,  
Ամէնուրեք, ամէնուրեք,  
Համալսարա՛ն, եկեղեցի՛:

— Ուսուցի՞չ ես, ինձ սորվեցուր.

— Ամէ՛ն միջոց գործադրելով  
Նըպատակիդ հասիր արագ:

— Քահանայ՞ ես, փրկէ՛ հոգիս.

— Դժոխքէն ո՛չ ոք կըրնամ փրկել:

Մա՛րդ կը փընտռեմ,  
Կողմն աշխարհի արեւելեան,  
Արեւմտեան,  
Հիւսիսային,  
Հարաւային,  
Մա՛րդ կը փընտռեմ,  
Արեւուն տակ — նոր օրերու Դիոգինէս —  
Լապտեր ձեռքիս.

— Գընա՛, մըտի՛ր յիմարանոց.

Մա՛րդ կը փընտռեմ,

Թող չունենայ վայելուչ տեսք,  
Թող չունենայ տիտղոս ու փառք,  
Թող տա՛սն անգամ մըտած ըլլայ  
Բանտ ու զընդան,  
Ըլլայ յետինն արարածոց,  
Ըլլայ բորոտ,  
Բայց ունենայ

Սիրտ մը՝ ծաղիկ, հոգին՝ քընար,  
Ու մէկ անգամ, ա՛հ, մէկ անգամ,  
Թող մենք իյնանք իրարու գիրկ.

— Գընա՛, մըտի՛ր յիմարանոց:

1937

ՀՐԱՁ ՔԱՋԱՐԵՆՑ

Մ Օ Ր Ս

( Կ Ա Ղ Ա Ն Պ Ի Ա Ռ Թ Ի Ի )

Ղօղանջներ աղու. օրհներգներ. յոյսեր.  
Նոր Տարին դարձեալ կ'ողջունեն մարդիկ:  
Ամէն դի շարժում, մաղթանք, խինդ ու սէր.  
Աշխարհի վըրայ մինակ եմ, մայրիկ:

Արեան, արցունքի տեսայ պատկերներ,  
Մանկութիւնս եղաւ անհղ փոթորիկ.  
Սուրով մեռնողի լըսեցի ճիչեր,  
Անոյշ համբոյրէդ զըրկուեցայ, մայրիկ:

Փոքրիկ, տարագիր, ո՛րքան քալեցի,  
Արեամբ թաթաւուն և ոտաբոսիկ.  
Քարերուն վըրայ զըլուխըս դըրի,  
Անոյշ օրօրէդ զըրկուեցայ, մայրիկ:

Հագար ինն հարիւր քըսան երկուքին  
Հագիւ քեզ զըտայ՝ եղայ երջանիկ.  
Բայց դեռ տասնամեայ նորէն բաժնեցին,  
Զիս նորէն քեզմէ բաժնեցին, մայրիկ:

Եւ անկէ ի վեր տարիներ անցան,  
Հայնէին նըման կու լամ ես սաստիկ.  
Տասներկու երկար տարիներ անցան,  
Ինչո՞ւ զիս մինակ թողուցիր, մայրիկ:

Ո՛ւր որ քալեցի, ո՛ւր որ կանգ առի,  
Ո՛ւր որ հըսկեցի, ո՛ւր որ նընջեցի,  
Քեզ որոնեցի, քեզ որոնեցի,  
Դուն չերեւեցար, մա՛յր իմ անձկալի:

Վիրաւոր էի, ծարաւի էի,  
Հալածուած էի, անօթի էի,  
Քեզ որոնեցի, քեզ որոնեցի,  
Դուն չերեւեցար, մա՛յր իմ անձկալի:

Եւ առանց քեզի մանկութիւնս անցաւ,  
Պատանեկութիւնս անցաւ թափառիկ.  
Բայց հոգեով մանուկ, հոգեով պատանի,  
Կը սպասեմ քեզի, կը սպասեմ, մայրիկ:

1934

ՀՐԱՁ ՔԱՋԱՐԵՆՑ